

ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Անհապաղ թողարկման համար
15 ապրիլ, 2016

Ծրագրի պատասխանատու՝ Նաիրա Վարդանյան,
ՀՌԿԿ-Հայաստանի ծրագրերի ղեկավար
Էլ.փոստ՝ pmdi@crcc.am, հեռ.՝ 574868

Հրապարակվեցին Կովկասյան բարոմետր 2015-ի արդյունքները

Երևան, Հայաստան: Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ)-Հայաստանը հրապարակեց Կովկասյան բարոմետր 2015-ի՝ Հարավային Կովկասի երկրներում ավելի քան 100 հարց պարունակող հարցաթերթով 2004թ.-ից ի վեր իրականացվող հանրային կարծիքի հետազոտության արդյունքները: Դրանք հարուստ տեղեկատվություն են պարունակում տարածաշրջանում սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և քաղաքական զարգացումների մասին հանրային կարծիքի վերաբերյալ:

2015թ. հարցումն անցկացվել է միայն Հայաստանում և Վրաստանում՝ պատահականորեն ընտրված 4200 տնային տնտեսություններում (1869 և 2251՝ համապատասխանաբար): Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ հանրությանն առավել հուզող հիմնահարցերը թե՛ Հայաստանում, և թե՛ Վրաստանում շարունակում են մնալ գործազրկությունն ու աղքատությունը. գործազրկությունը որպես կարևորագույն խնդիր մատնանշել են 2015թ. Հայաստանում հարցվածների 40 տոկոսը, Վրաստանում՝ 51 տոկոսը, իսկ աղքատությունը՝ համապատասխանաբար 17 և 16 տոկոսը:

Հետաքրքիր է, որ իրենց երկիրը ոչ ժողովրդավարական համարողների բաժինը վերջին տարիներին նկատելիորեն ավելացել է՝ 2015թ. Հայաստանում հարցվածների շրջանում կազմելով 32 տոկոս (2013թ. 28 տոկոսի դիմաց), իսկ Վրաստանում՝ 17 տոկոս (2013թ. 11 տոկոսի դիմաց): Ի դեպ, իրենց երկիրը ոչ ժողովրդավարական էին համարել 2013թ. Ադրբեջանում հարցվածների 18 տոկոսը¹:

Հանրային կառույցների նկատմամբ նվազող վստահության համատեքստում շահեկանորեն առանձնանում են բանակն ու եկեղեցին: Բանակին լիովին և ավելի շուտ վստահում է 2015թ. Հայաստանում հարցվածների 76 տոկոսը (2013թ.՝ 62 տոկոս), իսկ Վրաստանում՝ 74 տոկոսը:

Հայաստանում վերջին զարգացումների վերաբերյալ նոր հարցերի պատասխանները ցույց են տալիս, որ 2015թ. հարցվածների միայն 15 տոկոսն է հավանություն տալիս առաջիկա սահմանադրական բարեփոխումներին, և 9 տոկոսը՝ կուտակային կենսաթոշակային համակարգին:

Ըստ հետազոտության արդյունքների՝ ի տարբերություն Վրաստանի, Հայաստանի հասարակությունը մեծապես սատարում է երկրի անդամակցությանը Եվրասիական տնտեսական միությանը (համապատասխանաբար՝ 21 և 52 տոկոս): Եվրոպական միությանն անդամակցելուն հավանություն է տվել Հայաստանում հարցվածների 37 տոկոսը, իսկ Վրաստանում՝ 41 տոկոսը:

Չնայած տարածաշրջանում սոցիալ-տնտեսական ու քաղաքական բարդ զարգացումներին, մարդիկ շարունակում են ապրել և արարել. 2015թ. Հայաստանում և Վրաստանում հարցվածների երջանկության միջին ինքնագնահատականը համապատասխանաբար կազմել է 6.5 և 6.6 միավոր (1-10 սանդղակով)²:

Հարավային Կովկասում հասարակագիտությունն ու հանրային քաղաքականությունը զարգացնելու առաքելությանը հավատարիմ՝ ՀՌԿԿ-ն ազատորեն հասանելի է դարձնում տվյալների շտեմարանները, գործիքներն ու հարակից փաստաթղթերը Կովկասյան բարոմետրի և ՀՌԿԿ-Հայաստանի կայքերում³:

ՀՌԿԿ-Հայաստանն իր գործունեությունն սկսել է 2003 թվականին՝ որպես Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի մայրաքաղաքներում հիմնված Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների ցանցի մաս: Երկար տարիներ զարգանալով Նյու Յորքի Կարնեգի կորպորացիայի, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և Երևանի պետական համալսարանի ծանրակշիռ աջակցությամբ, 2013թ. կեսերից ՀՌԿԿ-Հայաստանը ստացել է անկախ հիմնադրամի կարգավիճակ՝ հավատարիմ մնալով հասարակագիտական հետազոտություններն ու հանրային քաղաքականության վերլուծությունը խթանելու հիմնական նպատակին:

¹ Ուշագրավ է, որ 2013թ. հարցվածների ծանրակշիռ մասը բոլոր երկրներում (61, 55 և 47 տոկոսը՝ համապատասխանաբար Վրաստանում, Ադրբեջանում և Հայաստանում) դեմոկրատիան նախընտրելի է համարել կառավարման մյուս համակարգերից:

² 2013թ. Հայաստանում հարցվածների երջանկության միջին մակարդակը կազմել է 6.7 միավոր, Վրաստանում՝ 7.0, իսկ Ադրբեջանում՝ 6.6 միավոր:

³ www.caucasusbarometer.org և <http://www.crcc.am/research-and-surveys/caucasusbarometer/documentation>